Նախագիծ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

24-ը դեկտեմբերի 2021թ. ք. Գյումրի

1. **ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2021 թվականին կատարված աշխատանքների մասին:**

Զեկուցող՝ Լիպարիտ Մարտիրոսյան -Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

2021թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 75.6 %-ով, նախատեսված 3,422,161.9 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 2,588,756.9 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 833,405.0 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2021թ. բյուջեների տարեկան սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2021թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Ընդամենը գույքային հարկ այդ թվում՝	**2,112,323.2**	**1,414,964.6**	**- 697,358.6**	**67.6**
ա) հողի Հարկ	9,7251.0	95,568.0	- 1,683.0	98.3
բ) անշարժ գույքի հարկ	512,979.6	139,099.0	- 373,880.6	27.1
գ) գույքահարկ	1,502,092.6	1,180,297.6	- 321,794.9	78.6
Պետական տուրք	52,300.0	64,048.0	11,748.0	122.5
Տեղական տուրք	132,863.1	117,749.1	- 15,114.0	88.6
Հողի և գույքի վարձակալություն,	**370,734.8**	**284,237.0**	**- 86,497.7**	**76.7**

այդ թվում՝				
ա/ հողի վարձավճար	309,733.1	230,035.1	- 79,697.9	74.3
բ/ գույքի վարձավճար	61,001.7	54,201.9	- 6,799.8	88.9
Այլ եկամուտներ	753,940.8	707,758.2	- 46,182.7	93.9
Ընդամենը սեփական եկամուտներ	3,422,161.9	2,588,756.9	- 833,405.0	75.6

2021թ. տասներկու ամիսների փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2020թ. համեմատությամբ կազմում է 14.2 % կամ ավել է հավաքագրվել 321,766.0 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

h/h	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2020թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1.	Արթիկ	483,564,6	381,179,6	-102,385,0	78,8
2.	Ամասիա այդ թվում՝	104,438,1	78,064,7	-26,373,4	74,7
2.1.	Ամասիա	61,688,1	44,997,6	-16,690,5	72,9
2.2.	Արփի	42,750,0	33,067,1	-9,682,9	77,4
3.	Աշոցք այդ թվում՝	128,336,4	91,582,7	-36,753,7	71,4
3.1.	Աշոցք	82,489,5	63,022,7	-19,466,8	76,4
3.2.	Սարապատ	45,846,9	28,560,0	-17,286,9	62,3
4.	Անի	222,950,2	150,687,1	-72,263,1	67.6
5.	Ախուրյան այդ թվում՝	693,804,9	377,823,3	-315,981,6	54,5
5.1.	Ախուրյան	216,141,5	157,537,4	-58,604,1	72,9
5.2.	Մարմաշեն	269,716,6	84,799,0	-184,917,6	31,4

Մարզի խոշորացված համայնքներից 2021թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Մարմաշեն համայնքում՝ 31.4%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 73.7% կամ նվազման տոկոսը կազմում է 42.3, գումարային նվազումը կազմել է 19321.2 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2021թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 84.4%, **Արթիկ** քաղաքը՝ 86.8%:

Մարզի թվով 24 համայնքներ չեն ապահովել 2021թ. տասներկու ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 75.6%-ը:

ՀՀ պետական բյուջեով 2021 թվականին տարեկան ամիսներին նախատեսված 6,498,320.3 հազ. դրամ «Դոտացիան» ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Մարզի համայնքներին ՀՀ պետական բյուջեից 2021 թվականի ընթացքում «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով հատկացվել է 1,356,376.9 հազ. դրամ, որից փաստացի ֆինանսավորվել է 1,055,153.3 հազ. դրամ: Ինչպես նաև հրատապ ծրագրով մարզին հատկացվել է 140,000.0 հազ. դրամ, որից ֆինանսավորվել է 132,335.2 հազ. դրամ:

2. Տեղական ինքնակառավարում, համայնքային ծառայություն, ընտրություններ
Զեկուցող՝ Արամ Անտոնյան ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ

2021 թվականի ընթացքում մարզպետարանի կողմից անհրաժեշտ աշխատանքներ են տարվել պետական և համայնքային շահերի ներդաշնակեցման, պետական կառավարման համակարգի մարմինների ու վերջիններիս տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության և փոխհամաձայնեցված գործողությունների ապահովման ուղղությամբ:

- Ընթացիկ տարում հրավիրվել և անցկացվել է մարզի խորհրդի 3 նիստ **(06.04.2021թ.,16.07.2021թ. և 24.12.2021թ.),** որոնց ընթացքում ներկայացվել են մարզպետարանի ստորաբաժանումների կողմից համապատասխան բնագավառներում իրականացված աշխատանքները, քննարկվել են մարզի համայնքների բնականոն գործունեության կազմակերպմանը վերաբերող մի շարք հարցեր, հայտարարություններով հանդես են եկել նաև պետական կառավարման մարմինների մարզային ստորաբաժանումների ղեկավարները**:**

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 1776-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն մարզի թվով 14 համայնքներում իրականացվել է տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն **(Գյումրի, Հոռոմ, Հայկավան, Հովտաշեն, Նոր Կյանք, Մեծ Մանթաշ, Բայանդուր, Սարալանջ, Անուշավան, Ղարիբջանյան, Գետափ, Աշոցք, Պեմզաշեն և Նահապետավան):** Իրավական հսկողությունն իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն և 2020 թվականի ապրիլի 9-ի թիվ 03-Ն հրամաններով հաստատված հարցաշարերին համապատասխան:

Իրավական հսկողության արդյունքները քննարկվել են համայնքների ավագանիների նիստերում, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման

ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ, իսկ հսկողություն իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմվել և գործողության մեջ են դրվել արձանագրված խախտումները վերացնելու ժամանակացույցներ, համաձայն որոնց սահմանված ժամկետներում խախտումները վերացվել են ամբողջությամբ:

- 2021 թվականի ընթացքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընթացակարգին համապատասխան, ուսումնասիրվել են համայնքների ավագանիների **թվով 1301** որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: **Թվով 676 (51.9%)** ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ և ուղարկվել համապատասխան համայնքներ: Արդյունքում՝ ապահովվել է նշված իրավական ակտերի համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը:

Հարգելի համայնքապետեր, հաշվի առնելով, որ համայնքների միավորման արդյունքում հնարավորություն է ստեղծվել նոր ձևավորված համայնքների աշխատակազմերում առավել պատրաստված կադրերի ընդգրկման համար, հույս ունենք, որ այսուհետ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի իրավաչափության ապահովման ուղղությամբ կարձանագրվեն զգալի բարելավումներ:

Համայնքային ծառայություն, կադրային ապահովում

2021 թվականին ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է մարզի թվով 17 համայնքների ղեկավարների, 46 ավագանու անդամների և թվով 29 համայնքների 130 համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացը:

Մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում 2021 թվականի ընթացքում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի թվով 12 (Գյումրի, Արթիկ, Ախուրյան, Մարմաշեն, Աշոցք, Մեղրաշեն, Պեմզաշեն, Գեղանիստ, Փոքր Մանթաշ, Գետափ, Վարդաքար,Ղարիբջանյան) համայնքներում անցկացվել են համայնքային ծառայության թվով 72 թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներ:

Մարզի թվով 4 համայնքներում կազմակերպվել և անցկացվել են նաև համայնքային ենթակայության թվով 7 կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներ:

<u>ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

- Ինչպես գիտեք, 2021 թվականը ընտրական տարի էր: Հունիսի 20-ին անցկացվեցին ՀՀ ԱԺ-ի, հոկտեմբերի 17-ին Գյումրի համայնքի ավագանու և դեկտեմբերի 5-ին Արթիկ,

Ախուրյան, Աշոցք, Ամասիա համայքների ավագանիների ընտրություններ: Ընտրություններ չեն անցկացվել միայն Անի համայնքում: Այժմ մարզում համայնքների թիվը 6-ն է: Նոր կազմավորված համայնքներում ներկայում ընթացքի մեջ են ավագանիների գործունեության կազմակերպման, նոր աշխատակազմերի ձևավորման, բնակավայրերում մատուցվող ծառայությունների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված աշխատանքները: Մեր կողմից ամենօրյա ռեժիմով մեթոդական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվում համայնքներին, վերը նշված գործընթացների կազմակերպման սահուն ընթացքն ապահովելու նպատակով:

Մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքների ավագանիների լիազորությունների ստանձնումը ՀՀ վարչապետի որոշումներով Գյումրի և Արթիկ համայնքներում և ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշումներով մարզի թվով 24 համայնքներում **(Ամասիա, Արփի, Սարապատ, Ազատան, Առափի, Սարալանջ, Սարատակ, Արևշատ, Լեռնակերտ, Հայկասար, Հայրենյաց, Հոռոմ, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նոր Կյանք, Փանիկ, Փոքր Մանթաշ, Բենիամին, Գետք, Երազգավորս, Հայկավան, Ղարիբջանյան, Ոսկեհասկ, Վարդաքար)** նշանակվել են համայնքների ղեկավարների պաշտոնակատարներ:

ՀՀ Շիրակի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 17-ի N 246-Ա որոշմամբ նշանակվել և ս/թ հոկտեմբերի 17-ին անցկացվել է Գյումրի համայնքի ավագանու հերթական ընտրությունը՝ համամասնական ընտրակարգով:

ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1637-Ն որոշմամբ նշանակվել և ս/թ դեկտեմբերի 5-ին անցկացվել են ՀՀ Շիրակի մարզի միավորված թվով 4 համայնքների (Արթիկ, Ախուրյան, Աշոցք, Ամասիա) ավագանիների ընտրությունները՝ համամասնական ընտրակարգով:

Մարզպետարանի կողմից անհրաժեշտ աշխատանքներ են տարվել օրենսդրությամբ ընտրական գործընթացներում մարզպետին և համայնքների ղեկավարներին վերապահված լիազորությունների իրականացման ուղղությամբ:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզում արձանագրվել է 630 արտակարգ դեպք (2020թ. նույն ժամանակահատվածում 546 դեպք), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը աճել են 84-ով (15,3%):

2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզում արձանագրվել է հանցագործության 1183 դեպք (2020թ. նույն ժամանակահատվածում 1259), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը նվազել են 76-ով (6,4%):

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության, ՀՀ ՊՆ Շիրակի կայազորի ռազմական ոստիկանության և ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների

համագործակցված աշխատանքների արդյունքում ապահովվել են 2020 թվականի ձմեռային և 2021 թվականի ամառային զորակոչերի կազմակերպման ու անցկացման աշխատանքները: 2021 թվականի ընթացքում անցկացվել է ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի թվով 4 նիստ, **(մարտի 3 –ին և 30-ին, հուլիսի 12-ին և 28-ին)** քննարկվել են տարկետման ներկայացված թվով 194 զորակոչիկների անձնական գործեր:

ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի քննարկումների արդյունքում կազմված եզրակացությունները սահմանված կարգով ու ժամկետներում ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

Իրավասու կառույցների համագործակցված աշխատանքների արդյունքում տարվա ընթացքում զորակոչերի առաջադրանքները կատարվել են ամբողջությամբ **/109,5 տոկոսով/:**

Զինվորական հաշվառման ընթացիկ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, մարզի համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների համապատասխան աշխատակիցներին մշտապես ցուցաբերվել է մեթոդական աջակցություն:

Ընթացքի մեջ են ՀՀ Շիրակի մարզի բնակիչ համարվող, զոհված և վիրավոր զինվորական ծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցության կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթների հավաքագրման աշխատանքները, որոնք սահմանված կարգով ներկայացվում են ՀՀ պաշտպանության համապատասխան ստորաբաժանում:

Կամավորության սկզբունքով աշխարհազորի ձևավորման նպատակով աջակցություն է ցուցաբերվել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Լրամշակվել և ՀՀ Շիրակի մարզպետի 09.09.2021թ-ի N 260-Ա որոշումով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մարզային պլանը»:

Արտակարգ իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանով նախատեսված բոլոր **156** միջոցառումները իրականացվել են ամբողջությամբ:

2021թ-ի դեկտեմբերի 1-ի դրությամբ արտակարգ դեպքերի հետևանքով մարզին հասցված նյութական վնասը կազմել է՝ 207 մլն 276 հազ 190 դրամ (**2020թ-ի նույն ժամանակահատվածում՝ պատճառած նյութական վնասը կազմել էր՝ 2 մլրդ 968 մլն 538 հազ 591 դրամ),** պատճառված նյութական վնասը նվազել է 2 մլրդ 061 մլն 262 հազ 401 դրամով, կամ 69,4 %-ով:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ

Համապատասխան աշխատանքներ են տարվել մարզում տեղակայված ՀՀ ՊՆ ստորաբաժանումների, Գյումրիում ՌԴ սահմանապահ զորամասի, ՌԴ 102-րդ ռազմաբազայի, մարզպետարանի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցված աշխատանքների ապահովման ուղղությամբ:

2021 թվականի հունվարի 28-ին ՀՀ զինված ուժերի կազմավորման 29 ամյակի, «Բանակ-հասարակություն» կապի ամրապնդման և մարզային նախաձեռնություններին ակտիվ մասնակցության համար ՀՀ Շիրակի մարզի 3 զորամասերի թվով 3, ինչպես նաև ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման թվով 3 ծառայող և ՀՀ Շիրակի կայազորի զինվորական դատախազության մեկ աշխատակից պարգևատրվել են ՀՀ Շիրակի մարզպետի շնորհակալագրերով:

3. ՀՀ Շիրակի մարզի առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտում 2021 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ

Զեկուցող՝ Լեյլի Ասլանյան առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին փոխարինող

Առողջապահության ոլորտ

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործում են թվով 27 բժշկական հաստատություններ նախորդ տարվա 31-ի փոխարեն, քանի որ համաձայն ՀՀ Կառավարության 2020 թվականի նոյեմբերի 17-ի և 2021 թվականի մայիսի 20-ի «ՀՀ կառավարության 2006 թ-ի նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1805-Ն և թիվ 805-Ն որոշումներով «Գյումրու ծննդատուն», «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր», «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» և «Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ-ները միացման ձևով վերակազմակերպվել են «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կազմում:

Մարզպետարանի ենթակայությամբ բժշկական հաստատություններում ծավալված մահճակալների թիվը 582 է: Բժշկական հաստատություններում աշխատակիցների թիվը 2202 է:

2021 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզի բուժհաստատություններին տրամադրված պետական պատվերի բյուջեն կազմել է 4 771 427.0 հազ.դրամ, ինչը 2020 թվականի նույն ժամանակահատվածի բյուջեի համեմատությամբ /4.807.279.4 հազ.դրամ / նվազել է 35 852.4 հազ. դրամով:

2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վճարովի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների գումարը կազմել է 826 275.5 հազ. դրամ 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ /702 575.0 հազ. դրամ/ ավելացել է 123 700.5 հազ. դրամով:

2021 թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ մարզի բժշկական կազմակերպությունների դեբիտորական պարտքը կազմում է 157 295.9 հազ. դրամ 2020 թվականի համեմատ /102 755.4 հազ. դրամ/ ավելացել է 54 540.5 հազ.դրամով, իսկ կրեդիտորական պարտքը՝ 486 364.1 հազ.դրամ 2020 թվականի համեմատ /460 724.2 հազ.դրամ/ ավելացել է 25 639.9 հազ. դրամով:

2021 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատություններում իրականացվել են մոտ 50 000.0 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ, որից 25000.0 հազ դրամը ՀՀ կառավարության 22. 07. 2021թ-ի թիվ 1210-Ն որոշմամբ «Մարզում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում» բյուջետային ծրագրի շրջանակներում :

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքում սեփական միջոցների հաշվին իրականացվել են 16823.2 հազ.դրամի վերանորոգման աշխատանքներ

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական բաժանմունքում սեփական միջոցների հաշվին իրականացվել են 7500.0 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ

«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվել են 13789.0 հազ դրամի վերանորոգման աշխատանքներ, որից 5000.0 հազ. դրամը հատկացվել է բյուջետային հատկացման ծրագրով ռենտգեն կաբինետի վերանորոգման և կահավորման նպատակով:

«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ում իրականացվել են 16870.0 հազ.դրամի վերանորոգման աշխատանքներ, որից 16789.0 հազ. դրամը բյուջետային հատկացման ծրագրով կտուրի կապիտալ վերանորոգման նպատակով:

«Գյումրու Ն.Ա. Մելիքյանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ում բյուջետային հատկացման ծրագրով իրականացվել են 3210.0 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ:

«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ում սեփական միջոցների հաշվին իրականացվել են 2267.5 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ:

«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ում սեփական միջոցների հաշվին իրականացվել են 120.0 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ:

«Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա»ՓԲԸ-ում սեփական միջոցների հաշվին իրականացվել են 1729.0 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ:

«Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սեփական միջոցների հաշվին իրականացվել են 2227.0 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ:

2021 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատությունները համալրվել են նոր և ժամանակակից սարքավորումներով, մասնավորապես՝

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է թթվածնային կայան, ուլտրաձայնային հետազոտության սարք, արհեստական շնչառության սարք, խնամյալի մոնիտոր, Հայ-ամերիկյան առողջապահական հիմնադրամի կողմից տրամադրվել է մամոգրաֆիկ հետազոտության սարք, ընկերությունն իր միջոցների հաշվին ձեռք է բերել հեմոդիալիզի երկու սարք:

«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է ուլտրաձայնային հետազոտության սարք, արհեստական շնչառության սարք, խնամյալի մոնիտոր:

«Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» ՓԲԸ–ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է թվային ռադիոգրաֆիկ սարք՝ համալրված ռենտգեն պաշտպանիչ ապակիով:

«Բեռլին պոլիկլինիկա»ՓԲԸ-ն իր միջոցների հաշվին ձեռք է բերել 2594.0 հազ դրամ արժողությամբ ֆիզիոթերապիայի սարք և արյան ընդհանուր վերլուծիչ:

«Գյումրու Ն.Ա. Մելիքյանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ին ՀՀ ԱՆ-ի կողմից տրամադրվել է ռենտգեն հետազոտության սարք:

«Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ-ն ձեռք է բերել 5650.0 հազ. դրամ արժողությամբ սոնոգրաֆիկ հետազոտության սարք

«Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն իր միջոցների հաշվին ձեռք է բերել 5200.0 հազ. դրամ արժողությամբ անզգայացման սարք:

«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամի կողմից տրամադրվել է ուլտրաձայնային դոպլեր սարք, արյան ավտոմատ վերլուծիչ, կոագուլոմետր, էլեկտրասրտագրիչ:

2021 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատություններում ներդրվել են բժշկական օգնության և սպասարկման նոր ծառայություններ, մասնավորապես՝

ՀՀ առողջապահության նախարարի 23.11.2018 թիվ 3021-Ա հրամանի 4-րդ կետով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2021 թվականի նոյեմբերի 16-ից ներդրվել է «Իշեմիկ ինսուլտի թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիայի ծառայություն»ը :

ՀՀ առողջապահության նախարարի 12.04.2021 թվականի թիվ 19-Ն հրամանի համաձայն մարզի ամբուլատոր պոլիկլինիկական հաստատություններում ներդրվել է ցերեկային ստացիոնարի ծառայություն՝ շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում չպահանջող պացիենտների բժշկական օգնությունը կազմակերպելու նպատակով:

«Գյումրու մոր ու մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի «Մանկական ակնաբանական հիվանդանոցային բուժօգնություն» և «Նորածինների նեյրոսոնոգրաֆիա և Helicobacter pylori անտիգենի որոշում» ծառայությունների մասով տրամադրվել է պետական պատվեր:

Բժշկական օգնությունը և սպասարկումը պատշաճ իրականացնելու նպատակով կազմակերպել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով, ինչպես նաև մարդասիրական օգնության ճանապարհով ձեռք բերված և մարզին հատկացված դեղորայքի ստացումը, բաշխումը մարզի բուժհաստատություններին:

«Մանկական ուղեղայիին կաթված» հիվանդություն ունեցող 26 երեխայի տրամադրվել է Ջերմուկի «Արարատ» առողջարանի ուղեգիր:

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի միջոցով պարբերաբար կազմակերպվում են ավագ և միջին բուժանձնակազմի շարունակական մասնագիտական զարգացման հեռավար դասընթացներ:

Մասնակցել ենք մարզպետի կողմից տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողությանը:

Մարզում ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով սահմանված կարգով մինչև 2021 թվականի դեկտեմբերի 4-ը կորոնավիրուսային հիվանդության ստացիոնար բուժման ծառայություններ են մատուցել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կորոնավիրուսային բաժանմունքը և ինֆեկցիոն բաժանմունքը 170 մահճակալ հզորությամբ : «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում գործում է նաև տրիաժ ծառայություն, որտեղ իրականացվում է կորոնավիրուսային հիվանդության կասկածելի դեպքերի հետազոտության և հետագա բուժման կազմակերպման ծառայություններ:

2021 թվականի ընթացքում «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում բուժում է ստացել կորոնավիրուսային վարակով 2444 պացիենտ, Երևան է տեղափոխվել 130 պացիենտ:

ՀՀ Շիրակի մարզում 30.11.2021 թվականը ներառյալ արձանագրվել է կորոնավիրուսային վարակի 8068 դեպք, որից 336-ը 0-18 տարեկանների մոտ: Գրանցվել է մահվան 275 դեպք: Նշված ժամանակահատվածում ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Շիրակ» մասնաճյուղի լաբորատորիայում իրականացվել է կորոնավիրուսի 21492 հետազոտություն:

23.12.2021 թվականի դրությամբ ամբուլատոր պոլիկլինիկական հաստատությունների հսկողության տակ, տնային պայմաններում բուժում է ստանում կորոնավիրուսային հիվանդություն ունեցող 92 պացիենտ:

Պատվաստումներում ՀՀ Շիրակի մարզի ազգաբնակչության ընդգրկվածության ցուցանիշը 23. 01. 2021թվականի դրությամբ կազմում է՝

1-ին դեղաչափ 68728 մարդ - 39 տոկոս

2-րդ դեղաչափ 47028 մարդ- 26. 7 տոկոս:

Ըստ ոլորտների ընդգրկվածության ցուցանիշը այսպիսին է.

Պետական կառավարման մարմինների աշխատակիցներ-95.5 տոկոս

Առողջապահական համակարգի աշխատակիցներ-95. 2 տոկոս

Ուսումնական հաստատությունների աշխատակիցներ-94.1 տոկոս

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ- 87.3 տոկոս

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

2021թ.

ՀՀ Շիրակի մարզում 2021 թվականի ապրիլ ամսից գործում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության վեց

տարածքային կենտրոն՝ Գյումրիում, Արթիկում, Մարալիկում, Ախուրյանում, Ամասիայում և Աշոցքում:

Նշված ժամանակահատվածում մարզի «Հայկական Կարիտաս» բարեսիրական, «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունների և «Հայաստան Կարմիր Խաչի Ընկերության» Շիրակի մարզային մասնաճյուղի ցերեկային խնամքի կենտրոններում և տնային պայմաններում խնամք է տրամադրվել մոտ 350-400 ծերի և հաշմանդամություն ունեցող անձի:

«Փյունիկ» հաշմանդամություն ունեցող անձանց միության հասարակական բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղը հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել է 30 հատ հաշմանդամի սայլակ, 41 հատ լսողական սարք, 10 հատ ձեռնափայտ, 14 հատ արմունկային հենակ, 8 հատ ետնաքայլակ, 10 հատ կրծքի պրոթեզ, 10 հատ Թևատակի հենակ, 10 հատ քայլակ, 11 հատ օրթոպեդիկ սայլակի բարձ, 20 հատ լողարանի աթոռ:

Ուսումնասիրերվել և համապատասխան ընթացք է տրվել ՀՀ վարչապետին ուղղված և ՀՀ Շիրակի մարզպետարան վերահասցեագրված, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզպետին ուղղված 4451 դիմումի: Ֆինանսական աջակցության վերաբերյալ դիմումներն սահմանված կարգով ներկայացվել են աշխատանքային խմբի քննարկմանը: Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 936 ընտանիքի:

Նշված ժամանակահատվածում իրականացվել են ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումներով, Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման միջոցառումներով, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին վառելափայտ տրամադրելու ծրագրով նախատեսված աշխատանքներ:

4. 2021 թ. համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ

Զեկուցող՝ Կարեն Բադիշյան զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ

ՀՀ կառավարության 2006 թվականի 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել թվով 62 տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր: Գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կոցմից բոլոր 62 ծրագրերը հավանության են արժանացել և գնահատվել են դրական:

2021 թվականի համար ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է **4 մլրդ 463 մլն դրամ, որից պետության մասնաբաժինը կազմում է 2,278 մլն դրամ (51%), իսկ համայնքի մասնաբաժինը՝ 2,185 (49%)**:

- **39** սուբվենցիոն ծրագիր՝ կառավարության որոշմամբ հաստատվել են և գումարը հատկացվել է ՀՀ Շիրակի մարզպետարանին (1,950,788 հազ.դրամ):
- **1** սուբվենցիոն ծրագիր ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ գումարի տրամադրման համար (749,452 հազ.դրամ):
- **8** սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքները ավարտված են: Սակայնք համայնքների կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու կամ ֆոնդային բյուջեում համապատասխան միջոցների բացակայության պատճառով տեղափոխվել է 2022 թվական (259,310 հազ.դրամ):
- **13** սուբվենցիոն ծրագրերի շինարարական աշխատանքները շարունակվելու են 2022 թվական (1,503,329 հազ.դրամից չի իրականացվել 894,123 հազ.դրամ):
- **1** սուբվենցիոն ծրագիր ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքը հրաժարվել է «ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի համար հակակարկտային կայանների ձեռքբերում» (համաձայն 2021 թ. փետրվարի 23-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ կայացած արտագնա խորհրդակցության N Վ/17 արձանագրության 11-րդ կետի):

Ըստ ծրագրի ոլորտների

- Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում՝ 12 ծրագիր (1,453,733.2 հազ.դր) նախատեսված 10 կմ-ից իրականացվել է 8,5 կմ:
- Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, սալարկմամբ, խճապատմամբ՝ 9 ծրագիր (301,348.4 հազ.դր) նախատեսված 4,4 կմ-ից իրականացվել է 3,1 կմ:
- Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում՝ 4 ծրագիր (85,053.4 հազ.դր) նախատեսված 7,9 կմ-ից իրականացվել է 7 կմ:
- Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում՝ 1 ծրագիր (21,216.5 հազ.դր) նախատեսված 1,5 կմ-ը ամբողջությամբ իրականացվել է:
- Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում՝ 6 ծրագիր (114,810.0 հազ.դր) նախատեսված 1016 լուսատուներից իրականացվել է 716:
- Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ 3 ծրագիր (770,805.5 հազ.դր) նախատեսված 342կՎտ իրականացվել է 192կՎտ:

- Բնակավայրերի գազաֆիկացում՝ 2 ծրագիր (69,775.6 հազ.դր) նախատեսված 5 կմ-ից իրականացվել է 4,4 կմ:
- Մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում՝ 6 ծրագիր (334,631.8 հազ.դր) նախատեսված 6 ծրագրից իրականացվել է 4-ը:
- Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում՝ 9 ծրագիր (236,673.5 հազ.դր) նախատեսված 7594 քմ իրականացվել է 5132քմ-ը:
- Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում՝ 1 ծրագիր (32,264.1 հազ.դր) նախատեսված 2130 քմ-ը ամբողջությամբ իրականացվել է:
- Մեքենասարքավորումների և գույքի ձեռքբերում՝ 8 ծրագիր (1,042,547.3 հազ.դր) նախատեսված բոլոր 63 մեքենասարքավորումները և 45 հակակարկտային կայանները ամբողջությամբ ձեռք են բերվել: